

# Ժողովուրդ

43  
(2709)

25 մարտի շաբաթ 2023  
տպագրության ԺԲ տարի

Է. Երեւան, Արուսյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## ՆԻԿՈՒՆ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 168



2022 թվականի դեկտեմբերի 8-ին՝ Ազգային ժողով-Կառավարություն հարցուպատասխանի ժամանակ, ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանը հարց ուղղեց վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ նշելով Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության տարածած հայտարարության մասին, որտեղ նշվում էր, որ հայկական եւ ադրբեջանական կողմերին ներկայացված ռուսական առաջարկի իրականացման դեպքում Լեռնային Ղարաբաղին հարակից վերջին երկու շրջանների հանձնումը Ադրբեջանին պետք է կապվեր Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի որոշման հարցի հետ: Այդ առաջարկը հայկական կողմը մերժել է 2020-ի ապրիլին:

«Երբեք բանակցային գործընթացում եւ փաստաթղթերում չի ֆիքսվել, որ այդ պոտենցիալ հանրաքվեն լինելու է Լեռնային Ղարաբաղում: Հասկանում եք, չի ֆիքսվել ոչ մի անգամ տարածք, թե որտեղ է տեղի ունենալու այդ հանրաքվեն: Հասկանում եք: Էստեղ էնքան սրբություններ կան: Ասում են՝ «окончательный статус Нагорного Карабаха (Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակ): Բայց ի՞նչ է լինելու էր կարգավիճակը, ո՞նց է որոշվելու: Ի՞նչ է լինելու վերջում: Որեւէ մեկը եւ հարցի պատասխանները գտնվել է», - հարցադրում արեց Փաշինյանը:

Սակայն 2007-ին հակամարտության կողմերին Մադրիդում ներկայացված սկզբունքների առաջին իսկ կետում ամրագրվում է.

«1) ԼՂ վերջնական իրավական կարգավիճակը կորոշվի պլեբիսցիտի միջոցով, որը ԼՂ բնակչությանը ընձեռնում է կամքի ազատ եւ իրական արտահայտում: Պլեբիսցիտի ժամկետներն ու մանրամասները կորոշվեն կիսամաձայնեցնելու ապագա բանակցություններում, ինչպես նկարագրված է 9-րդ կետում: ԼՂ բնակչությունն ասելով՝ հասկացվում են 1988 թ. ազգային համամասնությունով ԼՂԻՄ-ում ապրող բոլոր ազգերը այնպիսի էթնիկ համամասնությամբ, ինչպես եղել է մինչեւ հակամարտության սկիզբը: Պլեբիսցիտի ընթացքում հարցի կամ հարցերի ձեւակերպման սահմանափակում չի լինելու, եւ կարող է թույլ տալ յուրաքանչյուր կարգավիճակի հնարավորություն»:

Ընդդիմադիր մեկ այլ պատգամավորի արձագանքելիս Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «2016-ի դրությամբ բանակցային գործընթացում տեղի է ունեցել աղետ, եւ Ղարաբաղը կորցրել է Ադրբեջանի կազմից դուրս լինելու գործնական եւ տեսական բոլոր հնարավորությունները»:

Այսպիսի հայտարարությունները չեն կարող լավ հետեւանք ունենալ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ԶՊ-ական պատգամավորները վերջերս խիստ նկատողություն են ստացել ֆրակցիայի ղեկավարության կողմից խմբակցության նիստերին ջնասանկցելու համար: Պահանջվել է այսուհետ առանց որեւէ պատճառաբանության գալ բոլոր քննարկումներին ու նիստերին: Բանն այն է, որ հատկապես վերջին օրերին Կոնցորյանն ու քարտուղար Զովհաննիսյանը պատգամավորներին իրենց «վերահսկողության տակ» պահելու ու նրանց հրահանգներ տալու համար շաբաթը մի քանի անգամ նիստեր են հրավիրում, սակայն ոչ բոլոր պատգամավորներն են ներկայանում այդ նիստերին: Փոխարենը, վայելելով պատգամավորական ազատությունը, հարցազրույցներ են տալիս, շփվում լրագրողների հետ, ինչը դուր չի գալիս խմբակցության ղեկավարությանը, որը հրահանգավորվում է գործադիրից: Կոնցորյանն ու Զովհաննիսյանը վերջերս լուրջ խոսակցություն են ունեցել ԶՊ-ականների հետ, ասել, որ վիճակն իսկապես լուրջ է, ուստի պետք է մի բան անելուց կամ խոսելուց առաջ համաձայնեցնել խմբակցության հետ: Կարելի է ասել՝ ԶՊ-ում «տեր թողիկի» մեթոդներն են գործում, պատգամավորները, առանց խմբակցության ղեկավարության թույլտվության, կարծիք հայտնելու իրավունք չունեն:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արցախում այս օրերին գերակտիվացել է Արցախի ՊԲ նախկին հրամանատար Սամվել Բաբայանը: Վերջինս պարբերաբար հանդիպումներ է ունենում Արցախի քաղաքական տարբեր ուժերի հետ, նրանց հետ տարբեր հարցերով բանակցություններ է անցկացնում, անգամ դպրոցներ է այցելում, ուսուցիչների հետ հանդիպում, թեեւ շատ դեպքերում մերժումներ է ստանում. քաղաքական շատ ուժեր չեն ցանկանում նրա հետ հանդիպել, քանի որ Արցախում վերջինս համարվում է Նիկոլ Փաշինյանի մարդը: Ավելին՝ տեղեկացանք, որ վերջերս անգամ դպրոցներից մեկում է միջադեպ եղել: Բաբայանը գնացել է, որպեսզի հանդիպի ուսուցիչների հետ, սակայն կտրուկ մերժել են նրան, չեն ցանկացել հանդիպել նրա հետ: Արցախցիների մոտ տպավորություն է, որ Բաբայանը ընտրությունների է նախապատրաստվում, իր համար այսպիսով ընտրագնազված է փորձում հավաքել, անգամ տարբեր բնակավայրերում երեք ամիս ժամկետով գրասենյակներ է վարձակալել, որոնք իր համար շտաբ են ծառայում: Թե ինչու է Բաբայանը ընտրությունների հույսեր փայփայում, անհասկանալի է, բայց այն, որ վերջինս հատկապես պատերազմից հետո անցակալի անձ է այնտեղ, փաստ է:



«Ժողովուրդ» օրաթերթին տեղեկություններ են հայտնի դարձել 2021թ. դեկտեմբերի 7-ին ԱԺ-ում տեղի ունեցած հայտնի միջադեպի առիթով հարուցված քրեական գործի քննությունից: Մասնավորապես, տեղեկացանք, որ ՀՀ քննչական կոմիտեն «Հայաստան» խմբակցության պատգամավոր Թադեոս Ավետիսյանի օգնական Գերասիմ Վարդանյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու որոշում է կայացրել: Ինչպես հայտնի է, այդ օրը խորհրդարանում վիճաբանություն էր տեղի ունեցել ԶՊ խմբակցության մի քանի պատգամավորների եւ «Հայաստան» խմբակցության պատգամավորների օգնականների միջև: ԱԱԾ-ն գնացել էր Ազգային ժողով՝ հարցաքննելու ԶՊ խմբակցության պատգամավոր, Նիկոլ Փաշինյանի աներորդի Զրաջա Զակոբյանին, Վահագն Ալեքսանյանին, Սիսակ Գաբրիելյանին եւ Արմեն Խաչատրյանին: Հավելենք, որ այդ քրեական գործով ԱԱԾ-ն նաեւ հարցաքննել է Ազգային ժողովի աշխատակազմի՝ տասնյակից ավելի աշխատակիցների, որի արդյունքում որոշում է կայացվել քրեական հետապնդում չիրականացնել:



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԱՇԿԱՆԴԱԾ ԵՆ

ՄԻՊ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ ՉԵՆ ՃԱՆԱԳՈՒՄ

Ինչդեռ արդեն հայցնի է, իբրև «Քաղաքացիական դաշինակ» խմբակցությունը Մարդու իրավունքների դաշնակցության թափուր դաշնակցության անդամ է գլխավոր դասախառնակալ Անահիտ Մանասյանի թեկնածությունը, որը նաև դասախառնակի մեծագույն թեկնածու է:

Ըստ Սահմանադրության՝ Մարդու իրավունքների պաշտպան կարող է ընտրվել 25 տարին լրացած, հասարակության մեջ բարձր հեղինակություն վայելող, բարձրագույն կրթությամբ թեկնածուն: «Ժողովուրդ» օրաթերթն այս առիթով գրույցել է 33 առաջին ՄԻՊ Լարիսա Ալավերդյանի հետ: Վերջինս մեզ հետ գրույցում ընդգծեց՝ իշխանության ՄԻՊ թեկնածուին ոչ ոք չի ճանաչում, հասարակության համար ընկալելի կերպար չէ, նրան ընկալում են միայն որպես քաղաքական թիմի անդամ:

**-Տիկին Ալավերդյան, իշխանության ՄԻՊ թեկնածուն՝ Անահիտ Մանասյանը, համապատասխանում է արդյոք Սահմանադրությամբ պահանջվող չափանիշներին:**

-Այն, որ ինքը գլխավոր դասախառնակի տեղակալն է, Սահմանադրության կամ օրենքի խախտում չէ, որտեղ խնդիր չէր լինի, եթե թեկնածուն հայտնի լիներ իր իրավապաշտպան գործունեությամբ եւ վստահություն վայելեր հասարակության կողմից: Ոչ սահմանադրական պահանջ է, քմահաճույք չէ: Սահմանադրական այդ պահանջն ունի շատ խորը արմատ, այն է՝ եթե այդ անձը հայտնի է ու վայելում է հանրության վստահությունը, այսպիսով նա անկախության երաշխիք է ձեռք բերում, ինչն ամենակարևորն է ՄԻՊ-ի համար: Արդեն երկրորդ անգամ է՝ հասարակության համար ընկալելի լինելու պահանջը բացեցիբաց խախտվում է՝ եւ՝ Քրիստինե Գրիգորյանի, եւ՝ Անահիտ Մանասյանի դեպքում: Այս անձինք, ի սկզբանե չհամապատասխանելով սահմանադրական պահանջին, արդեն իսկ կաշկանդված են: Այս դեպքում կախվածությունը թե՛ գործադիրից, թե՛ իշխող քաղաքական ուժից շատ մեծ է լինում: Այսինքն՝ խնդիրը



ոչ թե այն է, թե ինչ պաշտոն է զբաղեցրել, այլ այն, որ հասարակության կողմից ճանաչված չէ, չունի հասարակական վստահություն, ինչն անկախության ամենամեծ երաշխիքն է: Ես իմ օրինակով կարող եմ ասել՝ լինելով 33 առաջին ՄԻՊ իշխանությունների կողմից քաղաքական հետապնդման էի ենթարկվում, ինձ համար կարևոր էր հասարակության վստահությունը, իսկ հասարակությունն ինձ վստահում էր, եւ երբ ակնարկում էին՝ արդյոք չեմ ուզում հրաժարական տալ, պատասխանում էի՝ իհարկե ոչ, ես հասարակության կողմից վստահություն եմ վայելում, պատասխանատվություն եմ կրում նրանց առաջ:

**-Տիկին Ալավերդյան, հաշվի առնելով, որ նա իշխանության ներկայացուցիչ է, ի՞նչ եք կարծում, կկարողանա՞ անհրաժեշտության դեպքում անաչառ արձագանքել մարդու իրավունքների խախտման դեպքերին, երբ դա լինի, օրինակ, իշ-**

**խանության ներկայացուցիչներից որեւէ մեկի կողմից:**

-Ես պետք է հիմնվեմ պրակտիկայի վրա: Արման Թաթայանը նույնպես եղել է Արդարադատության նախարարի տեղակալ, երբ առաջարկվել է ՄԻՊ պաշտոնում, բայց դա իրեն չի խանգարել լինել սկզբունքային: Մարդու իրավունքների պաշտպան բոլոր դեպքերում էլ ընտրվում են այն թեկնածուները, ում առաջարկում է իշխող խմբակցությունը, ուստի սա չէ թույլ կողմը: Առաջնային խնդիրն այն է, որ նա հասարակության համար ճանաչելի չէ, իրեն ընկալում են գուտ քաղաքական թիմի անդամ: Կրկնում եմ հասարակության կողմից ընկալելի լինելը երաշխիք է, որ անկախ գործի օրենսդիր եւ գործադիր մարմիններից: Անահիտ Մանասյանը չունի ճանաչելիություն, ինչը առաջնային պայման է ՄԻՊ-ի համար:

*Զրույցը ՔՐԻՍՏԻՆԵ ՍՈՒՇԵՂՅԱՆԸ*

ԱՎԵԼԻ ԸՍՏ

ԶԵՆՔ



«Իմ նախագահության օրոք 5-րդ շարայուն չենք ունեցել», - երեկ՝ մարտի 24-ին՝ Սամվել Ֆարմանյանի գրքի շնորհանդեսից հետո, լրագրողների հետ ճեպագրույցում ասաց 33 երրորդ նախագահ Սերժ Սարգսյանը՝ անդրադառնալով Նիկոլ Փաշինյանի այն հայտարարությանը, թե 3-րդ շարայունը պարտվել է, որովհետեւ բանակում գործել է 5-րդ շարայունը:

«Եթե այդ մարդը գիտի, որ 5-րդ շարայուն ենք ունեցել, բա ինչո՞ւ միջոցներ չի ձեռնարկել այդ 5-րդ շարայուն դեմ: Իմ կարծիքով՝ նա ինչ-որ տեղ ճիշտ է ասում: Միգուցե ի՞նչքն է գլխավորում այդ 5-րդ շարայունը: Եթե այդքան մանրամասն տեղյակ է, բնական է», - ասաց երրորդ նախագահը:

Անդրադառնալով ՊՆ նախարար Սուրեն Պապիկյանի այն հայտարարությանը, թե 5-րդ շարայունը դրսից է ուղղորդվել, Սերժ Սարգսյանն արձագանքեց.

«Երեւի Սուրեն Պապիկյանը հավաստի տեղեկություններ ունի, հակառակ դեպքում այդպիսի անլուրջ հայտարարություններ չի կարող անել: Ես դրսից կառավարվող այլ մարդկանց գիտեմ, որոնք իրենց երբեք 5-րդ շարայուն չեն համարում: դրսից կառավարվող ուրիշ մարդկանց չգիտեմ»:

«Ես չգիտեմ, թե ինչ կտա հայ-թուրքական հարաբերությունները, որովհետեւ շատ բան է խառնվել: Մենք հրապարակել էինք մեր բանակցությունների փաթեթը: Դուք տեղյակ եք՝ իրենք ինչի մասին են բանակցում, ի՞նչ են խոսում: 3-րդ շարայունն են, որ առանց նախապայմանների է, շուտ-շուտ կրկնում են, որ հանկարծ չուռանան, բայց մենք ի՞նչ գիտենք՝ առանց նախապայմանների է, թե նախապայմաններով», - ասաց երրորդ նախագահը:

Սերժ Սարգսյանի խոսքով՝ իրենց իշխանության ժամանակ նպատակը ոչ թե Թուրքիայի հետ ճանապարհների բացումն էր կամ անտեսական նպատակները, այլ 3-րդ շարայունի անվտանգությունն ապահովելը:

«Մեր ցանկությունն էր, որ Թուրքիային հեռու պահենք գոնե բացահայտ ռազմական աջակցություն Ադրբեջանին ցույց տալուց: Եթե մի սկզբունքային որոշում ես կայացնում, ապա ինքըքն ներսում հաշվարկում ես՝ եթե ստացվի, ինչն է լինելու օգուտը, եթե չստացվի, ինչն է օգուտը: Մենք բավականին օգուտներ քաղեցինք, որովհետեւ միջազգային հանրությունը համոզվեց, որ հարաբերությունների բացակայության պատճառը մենք չենք»:

ՅԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ԱԳՐԻԵՉԱՆԻ ԱԳՐԵՄԻՎ ԲԱՅԼԵՐԻՆ ՈՒ ՄԱԳՐԱՆՔՆԵՐԸ

Իսրայիլում Հայաստանի դեսպան Սոս Ավետիսյանը հարցազրույց է ավել խոսակցական El Mundo թերթին, որում ներկայացրել է Արցախի ու Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի ագրեսիվ քայլերն ու սադրանքները, անդրադարձել Լաչինի միջանցքի արգելափակմանը, դրա հետեւանքով Արցախում ստեղծված հումանիտար ճգնաժամին եւ այլ թեմաների:

**-Ինչպիսի՞ն է ներկայիս իրավիճակը 2020 թվականի Ադրբեջանի հետ հակամարտությունից հետո:**

-2020 թվականի գինադադարից ի վեր Ադրբեջանի ագրեսիաները 3-րդ շարայունի դեմ երբեք չեն դադարել: Ադրբեջանական վերջին ագրեսիան արդեն դատապարտվել է Իսպանիայի կողմից՝ Պատգամավորների Կոնգրեսի ինստիտուցիոնալ հայտարարությամբ: Նրանք անում են ամեն ինչ, որպեսզի Լեռնային Ղարաբաղում ապրող հայերի կյանքն անհարկին դարձնեն: Դեկտեմբերից ի վեր որոշ կեղծ էկոակտիվիստներ արգելափակել են Ղարաբաղը, սակայն նրանք իրականում Ադրբեջանի անվտանգության ծառայության գործակալներ են:

Լուս Ադրբեջանի անվտանգության ծառայության գործակալներ են:

**-Ինչպիսի՞ն է Լեռնային Ղարաբաղում ապրող 120.000 հայերի վիճակը ավելի քան մեկ ամիս գրեթե պաշար չունենալուց հետո:**

-Այժմ կիրառվում է գնումների կտրոսային համակարգ, որպեսզի կարողանան սննդից օգտվել: Մարդիկ տառապում են: Բազմաթիվ ընտանիքներ կան, որոնք այսօր բաժանված են. 3-րդ շարայուն էին գնացել՝ սուրբծննդյան տոների առթիվ իրենց հարազատներին այցելելու կամ «Մանկական Եվրատեսիլ»-ը դիտելու, եւ այժմ չեն կարողանում վերադառնալ, քանի որ միջանցքը փակ է: Գազը, լույսը, ջուրն էլ են կտրել... Ամենօրյա սարսափ է Լեռնային շատ ցուրտ վայրում: Նրանք անհրաժեշտ են նույնիսկ երեխաներին: 3-րդ շարայունի 17-ին ադրբեջանցի զինվորները, «Ադրբեջան» գոռալով, ներխուժել են 13-ամյա երեխաներով լի ավտոբուս, տեսանկարահանել բոլորին, վախեցրել: Պատկերացրեք, թե ինչ տեսակի կազմակերպություններ կարող են իրականացնել սա: Էթնիկ գտում է, հիմա՞ ավելի մեղմ, երեւի մի ուրիշ ժամանակ ավելի թե՛ծ լինի:

**-Կարո՞ղ է Լեռնային Ղարաբաղի պատերազմը դառնալ 2023 թվականի կոնֆլիկտներից մեկը:**

-Զինադադարի ստորագրումից ի վեր կա այդ հավանականությունը, բայց պատերազմ մղելու մեջ միակ շահագրգռված երկիրն Ադրբեջանն է, քանի որ հասկացել է, որ բոլորը զբաղված են այլ հարցերով, հարմար ժամանակ է 3-րդ շարայունի վրա հարձակվելու համար: Օրինակ՝ ստեղծել է մեկ այլ «կազմակերպություն», որը կոչվում է «Արեւմտյան Ադրբեջան»: Մամուլի ասուլիսում նրանք ասացին, որ ադրբեջանցիները «իրավունք ունեն վերադառնալ իրենց պատմական հողերը» եւ պատրաստվում են ուսումնասիրություններ սկսել, որպեսզի հիմնավորեն, որ ադրբեջանցիները պատմականորեն ապրել են այնտեղ: Պարզ է, թե ինչպես են գաղափարախոսական հենք նախապատրաստում նոր ագրեսիաներ սկսելու համար: Ալիեւի վարչակարգի համար անհրաժեշտ է ունենալ արտաքին թշնամի, ինչպես եւ միշտ տեղի է ունենում ավտորիտար ռեժիմն ունեցող երկրների պարագայում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՆՐԱՊԵՏ

ԻՆՉ ԹԵՄԱՆԵՐ ԵՆ ՔՆՆԱՐԿԵԼ

ԵՐԿԱԿԻ ՄՏԱՆԴԱՐՏՆԵՐ

Աղբբեջանն արդեն 4 ամիս է՝ փակ է պահում Արցախը 33-ին կապող Լաչինի միջանցքը...

ԳԻՄԵԼ Է ԳԱՏԱՐԱՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Կարեն Մանուկյանը դիմել է վարչական դատարան՝ պահանջելով, որ դատարանը ստիպի Կոմիտեին 25.01.2022թ. թիվ 123-Ա հրամանը վերացնելու...

ԳԱՏԱՎՈՐՆ ԱՆԳՈՐԾ ՉՄՆԱՅ

33 նախագահ Կահագն Խաչատուրյանի մարտի 23-ի հրամանագրով Հայաստանի մարզերում դատավորներ են նշանակվել: Այդ նշանակումների շարքում Սասուն Մխիթարյանը նշանակվել է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր: Սասուն Մխիթարյանը նախկինում աշխատել է որպես առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի միջոցառական քրեական վարչության դատական երաշխիքների վարչությունը եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումներն իրականացնելու մասին միջնորդություններն ու բողոքները քննող դատավոր Տավուշի մարզում: Այդ դատարանը հանրությանն առավել հայտնի է « կալանքների դատարան» անունով: Ըստ Տավուշի մարզից փաստաբանների՝ Սասուն Մխիթարյանը բավարարում էր քրեական գործերով մեղադրվողների նկատմամբ որպես խափանման միջոց կալանք կիրառելու վերաբերյալ միջնորդությունները: «Կալանքների դատարանի» լուծարումից հետո Սասուն Մխիթարյանն անգործ էր մնացել, սակայն իշխանությունը, գնահատելով նրա մատուցած ծառայությունները, նրան նշանակել է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր:

«Խորհրդարանում հյուրընկալեցի Հայաստանում Շվեդիայի Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան Ն.Գ. դարոն Պասրիկ Սվենսոնին»,- հայտնի է ԱԺ մարզու իրավունքների դաշտում հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմայանը:

«Շվեդիայի դեսպանությունը Հայաստանում շատ ակտիվ գործունեություն է ծավալում, եւ, որպես օրինակելի օրենսդրություն ունեցող երկրի ներկայացուցիչ, շատ կարեւոր էր դեսպանի հետ մեր հանդիպումը, նաեւ՝ իբրեւ Հայաստան-Շվեդիա բարեկամական խմբի անդամ:

Շնորհակալություն հայտնեցի դեսպանին Շվեդիայի Թագավորության կառավարության եւ խորհրդարանի ներկայացուցիչների կողմից աղբբեջանական գործողությունները հասցեական քննադատելու համար:

Ներկայացրի շրջափակման մեջ գտնվող 120000 արցախահայության առջեւ ծառայած խնդիրները՝ ընդգծելով, որ աշխարհը պետք է ճանաչի Արցախի Հանրապետության ժողովրդի՝ իր հայրենիքում ազատ եւ անկախ ապրելու իրավունքը՝ Կոստվոյի օրինակով:

Խոսեցինք Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ԵԱՀԿ Մինսկի խմբի մանդատի կարեւորության եւ կենսունակության մասին: Այդ առումով նշեցի, որ Հայաստանը պետք է դառնա այն օղակը, որտեղ կարողանան ԱՄՆ-ի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի ներկայացուցիչները նստել մի սեղանի շուրջ եւ խոսել Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի մասին, որովհետեւ հակառակ ճանապարհը նշանակում է Աղբբեջանի կողմից Արցախի ժողովրդի ցեղասպանություն:

Դեսպանն արտահայտեց իր մտահոգությունը Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում ստեղծված դժվար իրավիճակի ու հումանիտար խնդիրների շուրջ՝ նշելով, որ Շվեդիան սատարում է հակամարտությանն:



թյան՝ կայուն եւ խաղաղ ճանապարհով կարգավորման միջազգային ջանքերին:

Պարոն Սվենսոնը հայտնեց նաեւ, որ Աղբբեջանի կողմից սեպտեմբերյան ագրեսիայից հետո եղել է Ջերմուկում, անձամբ տեսել, որ թիրախավորվել էին ոչ միայն ռազմական, այլեւ քաղաքացիական ենթակառուցվածքները:

Ե՛վ դեսպանը, ե՛ւ ես միաժամանակ արձանագրեցինք, որ Հայաստանը ժողովրդավարության ճանապարհով զարգանա-

լու այլընտրանք չունի, եւ Շվեդիան պատրաստ է ներդնել բոլոր ջանքերը Հայաստանում ժողովրդավարության զարգացման համար:

Դեսպանը նաեւ ողջունեց մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի ակտիվ եւ կարեւոր գործունեությունը, ներկայացրեց Շվեդիայի կողմից իրականացվող տարածաշրջանային ծրագրերը»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆՈՐ ՊԱՏՎԻՐԱԿՆՈՒԹՅՈՒՆ ԿԺԱՄԱՆԻ

Ապրիլի 3-6-ը Հայաստանի Հանրապետություն կժամանի Սլովակիայի Հանրապետության Ազգային խորհրդի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Մարիան Զեռիի գլխավորած պատվիրակությունը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Հայաստան ժամանող պատվիրակությանը կդիմավորի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանը:

Պատվիրակության ընդունելությունը կկազմակերպվի պետական բյուջեով Ազգային ժողովին այդ նպատակի համար հատկացված միջոցների հաշվին:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻ ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Ամենայն հայոց կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ:

Մայր Աթոռի տեղեկատվական համակարգից հայտնում են, որ գերաշնորհ Ս.

Վահան Եպիսկոպոս Հովհաննիսյանը սույն թվականի ապրիլի 1-ից ծառայության է կոչվել Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունում:

Գերաշնորհ Ս. Դանիել Եպիսկոպոս Ֆրնտրգյանը սույն թվականի ապրիլի 1-ից նշանակվել է Գետրոգյան հոգևոր ճեմարանի ասպիրանտուրայի բաժնի ղեկավար:

ՄՏՔԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

33 Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանը մարտի 24-ին ընդունել է Հայաստանում Լեհաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Պավել Չեպլակին, որն ավարտում է Հայաստանում իր դիվանագիտական առաքելությունը:

Սոցեր են փոխանակվել Հայաստանում ԵՄ երկարաժամկետ մշտադիտարկման առաքելության տեղակայման վերաբերյալ, Սարգիս Խանդանյանը շնորհակալություն է հայտնել Լեհաստանի կառավարությանը առաքելություն տեղակայելու որոշմանն աջակցելու համար՝ համոզմունք հայտնելով, որ այն էա-

կան դերակատարություն կունենա տարածաշրջանում խաղաղություն եւ անվտանգություն հաստատելու գործում:

Դեսպանը շնորհակալություն է հայտնել ընդունելության համար: Նա շնորհավորել է Սարգիս Խանդանյանին հանձնաժողովի նախագահ ընտրվելու կապակցությամբ: Պավել Չեպլակը կարեւորել է երկու երկրների օրենսդիր մարմինների միջեւ համագործակցության խորացումը:

Հանդիպման ավարտին քննարկվել են նաեւ առաջիկայում Լեհաստան-Հայաստան բարեկամական խմբի՝ Հայաստան նախատեսվող այցին վերաբերող հարցեր:

ԻՆՉ ԵՆ ՔՆՆԱՐԿԵԼ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն երեկ ֆրակցիայի նիստ է արել 334 սենյակում:

Աշխատանքային քննարկում է եղել, քննարկվել են Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամի թեկնածության հարցը:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԲԱՅԱՅԱՅՏՈՒՄ

ԴԱՆԱԿԱՂԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻ ԲԱՆԻ ԴԵՊՔԵՐ

ՀՀ Բնօրինակ կոմիտեի Լոռու, Արմավիրի եւ Վայոց ձորի մարզային բնօրինակ վարչություններում իրականացված բնօրինակ եւ վարույթային գործողությունների արդյունքում բացահայտվել են դանակահարությունների մի քանի դեպքեր:

Մասնավորապես, ՀՀ ԲԿ Լոռու մարզային քննչական վարչությունում իրականացված քննությանը պարզվել է, որ 2022թ. հուլիսի 11-ին՝ երեկոյան, Ալավերդի քաղաքի 35-ամյա բնակիչը 38-ամյա եղբոր հետ Ալավերդու այգում մասնակցել է հացկերույթի: Այդ ընթացքում ժամը 22:00-ի սահմաններում, կենցաղային հարցերի շուրջ վիճաբանություն է առաջացել վերջինիս եւ հացկերույթի մեկ այլ՝ 50-ամյա բնակիչի միջև: Նշված անձինք պարզաբանումներ կատարելու նպատակով առանձնացել են այգում, որտեղ նրանց միջև շարունակվող վիճաբանության ընթացքում 50-ամյա տղամարդն իր մոտ եղած դանակով մեկ անգամ դիտավորյալաբար հարվածել է 38-ամյա տղամարդուն, այնուհետեւ՝ վիճաբանությանը միջամտած վերջինիս 35-ամյա եղբորը: Եղբայրներին պատճառվել է ծանր մարմնական վնաս:

Ալավերդի քաղաքի 50-ամյա բնակիչին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով:

ՀՀ ԲԿ Արմավիրի մարզային քննչական վարչությունում իրականացված քննությանը պարզվել է, որ Արագածոտնի մարզի 47-ամյա բնակիչը իր գործընկերուհու հետ Արմավիրի մարզի Գայ համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղմթերքի շուկայում զբաղվել է գյուղատնտեսական մթերքների վերականգնմամբ: 2022թ. օգոստոսի 1-ին շուկայի աշխատակիցներից մեկը դիտողություններ է արել 47-ամյա տղամարդուն, պահանջել այլևս շուկա չգալ, բացի այդ, պարբերաբար կոնֆլիկտային իրավիճակներ է ստեղծել եւ հայիոյախառն արտահայտություններ հնչեցրել 47-ամյա տղամարդու ու նրա գործընկերուհու հասցեին: 2022թ. օգոստոսի 3-ին ժամը 04:00-ի սահմաններում, 47-ամյա տղամարդը, շուկայում տեսնելով հիշյալ աշխատակցին, սուր կտրող-ծակող գործիքով հարվածներ է հասցրել նրան՝ պատճառելով կյանքին



վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածքներ:

47-ամյա տղամարդուն մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով:

Վերոնշյալ երկու վարույթներով մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել բացակայելու արգելքը: Նշված վարույթներով նախաքննությունն ավարտվել է մեղադրական եզրակացությամբ, եւ վարույթի նյութերն ուղարկվել են հսկող դատախազներին:

Դանակահարության եւս մեկ դեպք բացահայտվել է ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչությունում կատարված քննությանը: Մասնավորապես, քննությանը փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ 2023թ. մարտի 11-ին՝ ժամը 14:00-ից 16:10-ն ընկած ժամանակահատվածում, Գետափ գյուղի 32-ամյա բնակիչը երկու անձանց հետ գտնվել է Աղավաճաճ բնա-

կայայրի Երեանյան խճուղում գտնվող սննդի կետում: Նրանց միջև անձնական հարցերի շուրջ վիճաբանություն է առաջացել, ինչից հետո 26-ամյա երիտասարդը 32-ամյա տղամարդու հետ դուրս են եկել սննդի կետից, քայլել դեպի «Աղավաճաճ» կոչվող տարածք, որտեղ երիտասարդը իր մոտ նախապես եղած կտրող-ծակող գործիքի գործադրմամբ դիտավորյալաբար հարվածներ է հասցրել 32-ամյա տղամարդու մարմնի տարբեր հատվածներին՝ պատճառելով կյանքի համար վտանգավոր, ծակած-կտրած, թափանցող վնասվածքներ:

Ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա՝ 26-ամյա երիտասարդին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով: Վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Այս վարույթի շրջանակներում նախաքննությունը շարունակվում է:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՎԱՔՆԵՐԻՑ ԽՈՒՄԱՓԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔԸ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Հարություն Պետրոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հաշվառված լինելով ՀՀ ՊՆ Ջ Եւ ՋՀԾ Երեանի թիվ 2 ստորաբաժանումում որպես պահեստազորային, 04.07.2022 թ. պատշաճ կարգով ծանուցված լինելով 01.08.2022թ. վարժական հավաքների վայր մեկնելու համար տարածքային ստորաբաժանում ներկայանալու վերաբերյալ, հրաժարվել է Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2022թ. հունիսի 23-ի թիվ 941-Ն որոշմամբ հայտարարված վարժական հավաքներին մասնակցելուց եւ ծանուցագրում նշված օրը՝ 2022 թվականի օգոստոսի 01-ին, չի ներկայացել տարածքային ստորաբաժանում խախտելով «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջները, խուսափել է 2022 թվականի օգոստոսի 1-ից մինչև հոկտեմբերի 30-ը անցկացվող վարժական հավաքներից՝ այդ ծառայությունից ազատվելու՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում:

Բ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՊԱՐԱԿՆԻՔՆԵՐԸ ՊՈՒՎԵԼ ԵՆ

Օրերս Հարավային մաքսատու-վարչության Մեղրիի մաքսային կետ-բաժին ժամանած բեռնատարը, ըստ փաստաթղթերի, Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն է ներկրել սպիտակ ցեմենտ: Համապատասխան մաքսային հսկողությունից հետո տեղադրվել են մաքսային կապարակիչները, եւ բեռնատարը Մեղրիից տեղափոխվել է նշանակման մաքսային մարմին: Կատարվել է բեռնատար ավտոմեքենայի տեսազննում, ինչի արդյունքում հայտնաբերվել է մեքենայի կիսակցորդի եւ կցորդի վրա ՀՀ մաքսային մարմինների կողմից տեղադրված 2 ապահովման միջոցների միտումնալից խախտման դեպք: Մասնավորապես, կապարակիչները հեռադիվերտիկ նպատակով կտրել են դրանց մաս կազմող մետաղալարերը, այնուհետեւ արարքը քողարկելու նպատակով մետաղալարերը տուսնի միջոցով կրկին ամրացրել են կապարակիչներին: Քանի որ առաջացել են հիմնավոր կասկածներ, որ սահմանափակումից հետո մինչ ժամանակավոր պահպանման պահեստ հասնելը, մեքենայում գտնվող ապրանքները փոխարինվել են այլ ապրանքներով, տեղում կիրառվել է նաեւ տեխնիկական միջոց՝ ռենտգեն սարք, որպեսզի տվյալները համեմատվեն Մեղրիի անցակետից ստացված տվյալների հետ: Պարզվել է՝ ավտոմեքենայի բեռն ամբողջությամբ փոխարինվել է այլ բեռով: Տեղում կազմվել է մաքսային կառնուների խախտման արձանագրություն՝ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 306-րդ, 307-րդ եւ 308-րդ հոդվածի հատկանիշներով: Այս հոդվածները ենթադրում են կապարակիչների խախտում, առանց մաքսային մարմինների թույլտվության բեռների բեռնաթափման ու բարձրագույն գործողություն եւ բեռների օտարում: Դեպքին առնչվող նյութերն ուղարկվել են ՊԵԿ իրավաբանական վարչություն հետագա ընթացքը որոշելու համար:

ԲՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԻՆՉ ԵՆ ԱՏՈՒԳՈՒՄ

ՄԱՂԱՑԱԾ ԵՐԵԽԱՅԻ ՄՈՐ ՀԵՏՔԵՐՈՎ

Իրավադաժաններն արդեն 4-օրն է, ինչ փնտրում են Գորխում մահացած հայցնաբերված նորածնի մորը: Մասնավորապես, հիվանդանոցներում սնուզում են, քե մեկ ամիս առաջ ինչ ծննդկաններ են գնացել հերթական սնուզման, որդեսգի այդ ճանադարհով զսնեն մորը: Նշանակվել է փորձագետություն, որ հասկանան, քե երեխան մահացած է ծնվել, քե ծնվելուց հետո է մահացել:

2023թ. մարտի 20-ին՝ ժամը 15:30-ին, քաղաքացին զանգահարել է ոստիկանության Գորիսի բաժին եւ հայտնել, որ Գորիս-Ստեփանակերտ ավտոճանապարհի Նոր Զանգեր կոչվող տարածքին

հարակից անտառում նորածնի դիակ կատարվել է քննություն եւ ՀՀ ԲԿ-ից:

Հաղորդման առթիվ 2023թ. մարտի 20-ին ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության Գորիսի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ եւ 5-րդ կետերով, նախաձեռնվել է քրեական վարույթ, կատարվում է նախաքննություն:

Դեպքի վայրի զննությանը Գորիս-Ստեփանակերտ ավտոճանապարհի աջակողմյան ձորակում ճանապարհի եզրից 25.3 մետր հեռավորության վրա՝ սոճենու ծառի տակ, հայտնաբերվել է իզական սեռի նորածնի դիակ:

Դիակը մասնակի ծածկված է եղել պոլիէթիլենային պարկերով: Դիակի շրջա-

կայքում հայտնաբերվել է սավան, պոլիէթիլենային պարկ, որի մեջ եւ կողքին եղել են տարբեր իրեր, խաղալիք, սննդի մնացորդներ:

Ոստիկանություն դիմած քաղաքացին հայտնել է, որ մարտի 20-ին՝ ժամը 15:00-ի սահմաններում, վորիիշյալ տեղանքում աստղաշուշան հավաքելու ընթացքում շան հաչոցի վրա մոտեցել եւ հայտնաբերել է նորածնի դիակն ու անմիջապես զանգահարել է ոստիկանություն:

Քրեական վարույթով օպերատիվ հետախուզական միջոցառումներ անցկացնելու մասին հանձնարարություն է տրվել ոստիկանությանը ծննդկանի հայտնաբերելու եւ դեպքի հանգամանքները պարզելու նպատակով:

ԲՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 23-ից 24-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 98 դեպք, որոնցից 10-ը՝ նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՆՊԱՏԱՄԻԱՆ ՀԱՐՑԵՐ

Մարտի 14-ին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկատվական հարցում էր ուղարկել 33 անտառային կոմիտեի նախագահ Վլադիմիր Կիրակոսյանին, սակայն 10 օր անց հարցումի պատասխան չի ստացել: Պատասխան չստանալու պատճառով մի քանի օր առաջ զանգահարեցի 33 անտառային կոմիտե, որի լրատվության պատասխանատու աղջիկը ինձ ասաց. «Դուք հանգիստ եղեք, մենք սահմանված ժամկետում Ձեր տեղեկատվական հարցմանը կպատասխանենք»:

Ըստ «Տեղեկատվության ազատության մասին» 33 օրենքի՝ հարցում ստացած հիմնարկությունը պարտավոր է աշխատանքային 5 օրվա ընթացքում պատասխանել հարցմանը. եթե հարցերին պատասխանելու համար լրացուցիչ աշխատանքի անհրաժեշտություն կա, պարտավոր է այդ մասին տեղեկացնել հարցումն ուղարկողին եւ հարցմանը պատասխանել մեկ ամսվա ընթացքում: Անտառային կոմիտեի ոչ մեկը, ոչ մյուսը չի արել:

Տեղեկատվական հարցման մեջ հարցրել եմ, թե անտառամերձ բնակավայրերի ընտանիքների համար անտառից անվճար, ինքնապատրաստմամբ թափուկ վառելիքայտ պատրաստելու համար ինչու են ընտրվել տարվա միայն մարտ-ապրիլ, սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսները. չէ՞ որ թափուկը սովորաբար հատկացվում է անտառի խորքերից, իսկ նշված ամիսներին անտառում թաց է լինում, ճանապարհները՝ անանցանելի:

Տեղեկատվական հարցումներից մեկն էլ հետեյալն էր. անտառտնտեսությունների տնօրենների թափուր պաշտոնը զբաղեցնելու նպատակով անցկացվող մրցույթներում անտառտնտեսությունների տնօրենների թեկնածուներին ներկայացվող պարտադիր պահանջների մեջ ինչու՞ են ներառված չէ անտառագիտական կամ բնագիտական բարձրագույն կրթություն ունենալը:

Ի դեպ, անտառային կոմիտեի նախագահ, 1984թ. ծնված Վ. Կիրակոսյանը 2018-ի իշխանափոխությունից հետո է ստացել բարձրագույն կրթություն, 2018-2021 թվականներին սովորել է 3յուսիսային համալսարանում «Կառավարում» մասնագիտությամբ, մինչև 2022թ. հունվարի 14-ը՝ Անտառային կոմիտեի նախագահ նշանակվելը, նա անտառային կամ բնագիտական ոլորտում չի աշխատել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ  
Տավուշ

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ՄԱՆՐԱՄԱՄՆՈՒՄ Է ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԸ

Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը դարգարանել է, թե ինչ առաջարկներ է Հայաստանը ներկայացրել Ադրբեջանի հետ խաղաղության դաշմանագրի նախագծի քննարկումների ընթացքում: Արարատ Միրզոյանը թեմային անդրադարձել է եգիպտական AlQahera News լրատվամիջոցին տեսախոսքում:



Հայաստանի արտաքին գործերի նախարարը նախ նշել է, որ 2020թ. պատերազմից հետո՝ վերջին երկու տարիների ընթացքում, Հայաստանի կառավարությունը, ունենալով տարածաշրջանում երկարատև եւ համապարփակ խաղաղության հասնելու քաղաքական կամք, բարեխղճորեն ներգրավված է եղել Ադրբեջանի հետ բանակցություններում: Նա հստակեցրել է, որ առկա են բանակցությունների առանձին ուղղություններ. առաջինը՝ տարածաշրջանի բոլոր տրանսպորտային հաղորդակցությունների բացումն է, երկրորդը՝ սահմանազատումն ու սահմանային անվտանգությունը, եւ երրորդը՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղ հարաբերությունների հաստատման պայմանագիրը: «Հաղորդակցությունների հարցի հետ կապված՝ մեր դիրքորոշումը հստակ է. Հայաստանը պատրաստ է բոլոր կոնսուլյացիաների բացմանն այն պահին, երբ Ադրբեջանն ընդունի, որ ճանապարհները պետք է գործեն այն երկրների ինքնիշխանության եւ իրավաբանության ներքո, որոնց տարածքով դրանք անցնում են: Սահմանազատումն հետ կապված, ցավոք, 2022թ. համապատասխան հանձնաժողովների կազմավորումից ընդամենը ամիսներ անց Ադրբեջանը ոչ միայն նոր տարածքային պահանջներ ներկայացրեց, այլ նաեւ եւս մեկ ներխուժում իրականացրեց 33 ինքնիշխան տարածք՝ փորձելով արդարացնել իր ագրեսիան սահմանների՝ սահմանազատված չլինելու կեղծ փաստարկով»,- ասել է նախարարը: Անդրադարձնալով պայմանագրին՝ նախարարը նշել է, որ սկսած 2022թ. դեկտեմբերից՝ Ադրբեջանի հետ փոխանակվել են պայմանագրի նախագծի մի շարք առաջարկներ՝ փորձելով

առաջ ընթանալ գործընթացում առանցքային հարցերի շուրջ արդար լուծումներ գտնելու համար: «Այսպես, հայկական կողմի առաջարկներից է պետական սահմանի սահմանազատման չափորոշիչների հստակեցումը, քանի որ, մեր կարծիքով, առանց Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ միջպետական սահմանների սահմանազատման վերաբերյալ հստակորեն համաձայնեցված չափորոշիչների, երկու երկրները չեն կարող հստակեցնել, թե որ տարածքային ամբողջականությունն են նրանք փոխադարձաբար ճանաչում, ինչն էլ, խաղաղության հաստատման փոխարեն, կհանգեցնի մեկ այլ բախման: Հաջորդը պետական սահմանից զինված ուժերի հեռացումն է եւ ապառազմականացված գոտու ստեղծումը սահմանագծի երկայնքով՝ որպես վստահության ձեւավորման միջոց եւ անվտանգության մեխանիզմ, ինչը կօգնի ապահովել ցանկացած հնարավոր եւ կալացիայի կանխումը: Անշուշտ, որպես կարելու բաղադրիչ, պետք է առկա լինի միջազգային մեխանիզմ, որ կհասցնեցնի Լեռնային Ղարաբաղի հայերի իրավունքների եւ անվտանգության հարցերը: Տավուշ, ի պատասխան մեր ջանքերի՝ մենք ականատես ենք լինում ոչ միայն բանակցությունների ժամանակ Ադրբեջանի կողմից մերժողական եւ առավելապաշտական մոտեցմանը, այլ նաեւ ագրեսիվ գործողություններին: Վերջերս՝ մարտի 2-3-ին տեղի ունեցած հրադարարի խախտումներին հետևեց մարտի 5-ին Լաչին

ի միջանցքում Ադրբեջանի կողմից նախապես ծրագրավորված դիվերսիոն հարձակումը, որի հետևանքով սպանվեցին Լեռնային Ղարաբաղի ոստիկանության երեք ծառայողներ: Այս գործողությունները հերթական անգամ ի ցույց են դնում կարգավորման գործընթացում Ադրբեջանի անկեղծության բացակայությունը, ինչպես նաեւ ուժի կիրառմանը շարունակական ապավինումը»,- նշել է նա: Նախարարը հավելել է, որ, նշված գործողություններին զուգահեռ, Ադրբեջանը պարբերաբար հետ է կանգնում պայմանավորվածություններից, շարունակում ատելության խոսքն ու այլախոսքի հրետորաբանությունը, ինչպես նաեւ հրաժարվում լուծել հումանիտար խնդիրները, որոնցից է մինչ օրս իր իսկ կողմից հաստատված՝ 33 հայ ռազմագերիներին պատանդառության մեջ պահելը:

Միրզոյանն ընդգծել է, որ ավելի մեծ թվով հայերի ճակատագիր դեռ մնում է անհայտ, եւ հայկական կողմը տեղեկացրել է գործընկեր կազմակերպություններին այդ բռնի անհետացումների դեպքերի մասին: «2020թ. Ադրբեջանի վերահսկողության տակ անցած հայկական կրոնական եւ մշակութային ժառանգությունը կանգնած է լիակատար ոչնչացման ահազանգով սպառնալիքի առջև: Այս ամենը մարտահրավեր է նետում տարածաշրջանում երկարատև խաղաղության եւ կայունության հաստատմանն ուղղված ջանքերին»,- ասել է Միրզոյանը:


ԿՈՐ

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆ ԳԱԳԱՐԵՑՆԵԼ

ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների դպրատնի 69 անդամներ՝ երկու կուսակցություններից, հերթական անգամ հանդես են եկել Ադրբեջանին ռազմական օգնությունը դադարեցնելու եւ Արցախին ու Հայաստանին 150 միլիոն դոլարի օգնություն ուղարկելու կոչով: Այս մասին հաղորդում է «Արմենորեն»-ը՝ վկայակոչելով Ամերիկայի Հայ դասի հանձնախմբի արածած հաղորդագրությունը:



Նախաձեռնությունը ղեկավարում է Կոնգրեսի հայկական հանձնախմբի հիմնադիր համանախագահ Ֆրենկ Փալոնը: Ներկայացուցիչների պալատի անդամները նամակ են հղել Պետական արտաքին գործառնությունների գծով հատկացումների ենթահանձնաժողովի նախագահ Մարիո Դիաս Բալարտին եւ ենթահանձնաժողովի բարձրաստիճան անդամ Բարբարա Լին, որոնք արդեն սկսել են 2024 ֆինանսական տարվա արտաքին օգնության մասին օրինագծի՝ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի տարբերակի մշակումը: «ԱՄՆ-ի շարունակական ռազմական օգնությունն Ադրբեջանին իրենից



ներկայացնում է «անցաթուր» ադրբեջանական ագրեսիայի համար, կանաչ լույս ադրբեջանական էսկալացիայի համար: Դա պետք է դադարեցնել նախագահ Բայդենի պաշտոնավարության հենց առաջին օրը. նա պաշտոնը ստանձնեց

որպես Ալիեյին զինելու եւ օգնելու սուր ընկալում: Բայց եթե մեր նախագահը չանի այն, ինչը ճիշտ է, ապա Կոնգրեսը պետք է գործի»,- ասել է Ամերիկայի Հայ դասի հանձնախմբի տնօրեն Արամ Համիդյանը:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 5 ՃՏՊ. 2 մարդ զոհվել է, 8-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ»

ՄԻ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ստոմատոլոգիան Արտյոմ Ղազարյանի կյանքի գործն է: Դրանով սկսել է զբաղվել 90-ականների վերջից, 2013թ.-ին Գյումրիում փոքր տարածք է գնել եւ ատամնաբուժարան բացել, սկսել զարգացնել բիզնեսը, իսկ տարիներ անց հիմնել է «ՍտոմԱրթ» ստոմատոլոգիական կլինիկան:

Ատամնաբուժարանի հին տարածքում այսօր կոսմետոլոգիական ծառայություններ են մատուցվում: Հարեանությանը՝ ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած կլինիկայում, ստոմատոլոգիական համապարփակ ծառայություններ են մատուցվում, կան հյուրասենյակներ՝ նախատեսված կենտրոնում սպասարկվելու նպատակով արտերկրից ժամանած հյուրերի համար, եւ կոնֆերանս սրահ, որտեղ կազմակերպվում են մասնագիտական քննարկումներ, ինչպես նաեւ հիգիենայի ազատ դասեր դպրոցականների համար:

«ՍտոմԱրթ»-ի հիմնադիր Արմեն Ղազարյանի խոսքով՝ ծառայությունների պահանջարկը մեծ է, ինչով պայմանավորված՝ կլինիկան ընդլայնման փուլում է: Ստոմատոլոգիական կլինիկայի շինարարությունը հնարավոր է դարձել «Կոնվերս բանկ»-ի աջակցությամբ, որն, ի դեպ, ֆինանսավորել է նաեւ մասնագետի առաջին բիզնես ծրագիրը: Նրա խոսքով՝ բանկն իր կողքին է եղել անգամ այն տարիներին, երբ այլ ֆինանսական կառույցներ չեն վստահել: Վստահության վրա հիմնված համագործակցությունը մտադիր է շարունակել նաեւ հետագայում:

«Կոնվերս բանկ»-ում նշում են, որ բանկի հետ գործակցության շրջանակում կերտված նման հաջողությունների պատմությունները շատ են: Այսօր բանկն առաջարկում է ՓՍՀ ֆինանսավորման մի շարք պրոդուկտներ հիմնական միջոցների ձեռք բերման եւ շրջանառու միջոցների համալրման, ընթացիկ ծախսերի, կրեդիտորական պարտքերի մարման համար՝ ապահովելով փոքր եւ միջին ձեռնարկությունների ֆինանսական հնարավոր գրեթե բոլոր կարիքների բավարարման համար նախատեսված միջոցներ:

Բանկում այս տեսանկյունից առանձնացնում են ֆինանսավորման տեսանկյունից պարզ ու արագ «Կոնվերս-Փասթ»-ը: Այս պրոդուկտը հետաքրքիր է ոչ միայն նպատակայնության լայն շրջանակով, այլեւ մրցունակ տոկոսադրույքով եւ որոշումների կայացման արագությամբ:

Եվս մեկ առավելությունն այն է, որ անշարժ գույքի գրավադրում չի պահանջվում: Ֆինանսավորում տրամադրվում է բանկային հաշիվների շարժի հիման վրա:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՄՐՅՈՒՅԹՆԵՐ

ԿԱՆ ՄԵԾ ԹՎՈՎ ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐ

«Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունում կառուցվածքային փոփոխությունները սեղի կունենան երկու փուլով», - երեկ իր դասնազարման 100 օրվան նվիրված ասուլիսում ասաց ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

Նրա խոսքով՝ առաջին փուլով կգնան ֆունկցիոնալ բաշխումների, երկրորդ փուլում փոփոխություններն ուղղված կլինեն ավելի շատ բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող կառուցվածքային փոփոխություններին, մասնավորապես՝ բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի ձեւավորմանը: Ժաննա Անդրեասյանն ասաց, որ նախարարությունում կան բավականին մեծ թվով թափուր աշխատատեղեր, եւ առաջիկայում ակտիվորեն դրանք համալրելու աշխատանքներ են տարվելու: Արդեն իսկ, ըստ նրա, բազմաթիվ մրցույթներ կան հայտարարված:

Նախարարը նշեց, որ մի քանի կարեւոր ուղղություններով աշխատանք է արվել, մասնավորապես՝ հանրակրթության ոլորտում ամբողջացրել են հանրակրթության կառավարման գործընթացի նախապատրաստման իրավական ողջ փաթեթը, արդեն հաստատվել են բոլոր անհրաժեշտ կարգերը: «Առաջիկայում կառավարման վերափոխված համակարգը կսկսի գործել այն դպրոցներում, որտեղ տնօրենների լիա-



զորությունների ժամկետներն ավարտվում են ապրիլի 13-ից հետո», - ընդգծեց Ժաննա Անդրեասյանը:

Նա նաեւ հայտնեց, որ 2023 թվականի սեպտեմբերից բոլոր դպրոցներում փուլաբար կսկսվի կրթության ներդրվել հանրակրթության նոր չափորոշիչը:

Անդրադառնալով ուսուցիչների կամավոր առեստավորմանը՝ Ժաննա Անդրեաս-

յանն ասաց, որ այդ գործընթացը բարելավել են այժմ հնարավորություն կունենան կամավոր առեստավորման այդ գործընթացին մասնակցել նաեւ այն մարդիկ, որոնք բավարարում են ուսուցչի պահանջներին, բայց չեն աշխատում դպրոցներում: Ամենայն հավանականությամբ, մարտի 27-ից կսկսվի դիմումների ընդունումը, որը կտեւի 2-3 ամիս:

ԼՈՒՐԵՐ

5 ՄԼՆ ԳՐԱՄԻ Է՝ ՎՆԱՍ

Բ.Պ.-ն, 2020 թվականի նոյեմբերի 24-ից մինչեւ 2021 թվականի հունիսի 22-ը հանդիսանալով «Հայաստան» ՊՈԱԿ-ի «Դսեղի անտառտնտեսություն» մասնաճյուղի Դսեղի անտառապահության 5-րդ պահաբաժնի անտառապահ, պատշաճ չի կատարել իր պարտականությունները, որի հետեւանքով նշված ժամանակահատվածում ապօրինի հատվել են տարբեր տեսակի 52 ծառեր եւ 7 ճյուղեր՝ պետությանը պատճառելով 5 մլն 43 հազար դրամի վնաս:

Այս մասին հայտնում են Գլխավոր դատախազությունից:

Նախաքննության ընթացքում Բ.Պ.-ն չի վերականգնել պատճառված վնասը:

2021 թվականի սեպտեմբերի 6-ին նախաձեռնվել է քրեական վարույթ: 2022 թվականի մարտի 28-ին Բ.Պ.-ին մեղադրանք է ներկայացվել 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի հոդվածի 2-րդ մասով (պաշտոնեական անփութություն):

Դատախազը 2023 թվականի մարտի 20-ին քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկել է դատարան: Միաժամանակ ներկայացվել է հայցադիմում պետությանը պատճառված վնասի վերականգնման նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՈՒՐԹԻԱ ԱՆԳԻՊՈՒՄ

Այսօր՝ 21:00-ին, Երեւանում կկայանա ՌԷՖԱ Եվրո-2024-ի որակավորման խմբային փուլի Հայաստան-Թուրքիա հանդիպումը: Մինչ այդ Հայաստանի եւ Թուրքի-



այի հավաքականները կունենան նախադային մարզումներ, եւ մարզիչները հանդես կգան մամուլի ասուլիսով:

Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Ալեքսանդր Պետրակովի եւ թիմի ավագ Վարադաատ Հարոյանի նախախաղային մամուլի ասուլիսը կկայանա Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի մամուլի ասուլիսների սրահում մարտի 24-ին՝ ժամը 16:30-ին, եւ կհեռարձակվի սոցցանցերում, ՀՖՖ պաշտոնական էջերում:

Հայաստանի ազգային հավաքականի նախախաղային մարզումը կկայանա մարտի 24-ին՝ ժամը 17:00-ին, Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտում: Մարզման առաջին 15 րոպեները բաց կլինեն մեդիայի հավատարմագրված ներկայացուցիչների համար: Թուրքիայի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Շտեֆան Կունցի եւ ֆուտբոլիստներից մեկի նախախաղային մամուլի ասուլիսը կկայանա Վազգեն

Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի մամուլի ասուլիսների սրահում մարտի 24-ին՝ ժամը 18:15-ին:

Թուրքիայի ազգային հավաքականի նախախաղային մարզումը կկայանա մարտի 24-ին՝ ժամը 19:00-ին, Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտում: Մարզման առաջին 15 րոպեները բաց կլինեն մեդիայի հավատարմագրված ներկայացուցիչների համար: Այս ֆուտբոլային հանդիպումն ինքնին կարող էլք պատմական համարել: Իսկ ՌԷՖԱ-ի որոշմամբ խաղին ներկա չեն լինի թուրք երկրպագուները՝ անվտանգության նկատառումներով: Հանդիպման բոլոր տոմսերը դեռ մեկ շաբաթ առաջ էին սպառվել, իսկ Հանրապետական մարզադաշտը ավելի քան 14 հազար հանդիսական է տեղավորում: ArmLur.am-ը գրել էր, որ 14 հազարից մոտ 5 հազար տոմս չէր վաճառվել՝ կրկին անվտանգության նկատառումներից ելնելով:

ՆԱԽՈՎ ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

«Հոդված» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՀՆՁԵՂՈՒԹՅՈՒՆ

Լ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՄԵԾ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԵՐ ԿՈՒՆ ԹԱՏԲՈՆՈՒՄ

Շառլ Գունոյի «Ֆաուստ» օպերայում մարտի 14-ին, 16-ին, 19-ին եւ 21-ին օպերային երգիչ Լիդարիս Ավետիսյանը ելույթներ է ունեցել Կոլոն բասրոնում՝ Ֆաուստի դերերգով: Հեղինակավոր MusicaClassicaBA ամսագիրը գրում է. «Ֆաուստը՝ երեսասարդ հայ տենոր Լիդարիս Ավետիսյանը, սիրադեմ է գեղեցիկ ֆնարական ձայնի՝ օժտված բնական հնչեղությամբ: Նա գերազանց ցուցադրում է իր վոկալային կարողությունները եւ լավագույնս է ներկայացնում այն ամենը, ինչը դասական երաժշտական դրամաները, թե՛ դրամատիկ կերպարը» (MusicaClassicaBA, 17.03.2023):



Մեկ այլ պարբերականում նշվում է, որ Լիդարիս Ավետիսյանը բացեց երեկոն Salut mon dernier matin արիայի արժանի կատարմամբ եւ շարունակեց դերը՝ ցուցադրելով բարձր վարպետություն, ինչն առավել վառ արտահայտվեց դերերգի ամենաքնարական հատվածներում, ինչպիսին է դյուբի՝ Salut demeure-ը, որը հորդում էր այնպես ազատ ու թեթեւ, ինչպես պահանջում է պարտիտուրը (Clarn.com 15.03.2023):

Գյոթեի փիլիսոփայական դրամայի հիման վրա գրված Շառլ Գունոյի համանուն «Ֆաուստ» օպերայով Կոլոն թատրոնը բացել է իր թատերաշրջանը: Այն հինգ գործողությամբ ֆրանսիական գրանդ օպերա է՝ բալետային խմբով եւ հզոր երգչախմբով: Ներկայացման բեմադրող ռեժիսորը, սցենարիստը, խորեոգրաֆը, հագուստների եւ լույսերի նկարիչը մեր օրերի ամենապահանջված մասնագետներից իտալացի Ստեֆանո Պոդան է, իսկ երաժշտական ղեկավարը՝ բրիտանացի դիրիժոր Յան Լաթամ-Քոնեկո: Մեֆիստոֆելի դերում հանդես է եկել ռուս հզոր բաս Ալեքսեյ Տիխոմիրովը, իսկ Մարգարիտի դերում՝ ռուսիացի սոպրանո Անիտա Զարթիսկա, որը տպավորիչ միջազգային կարիերա է կերտում: Ներկայացումը բեմադրված է եղել

աբստրակտ, պոետիկ ոճով, այն հարուստ է սիմվոլիկ, փիլիսոփայական եւ լիտուրգիական էլեմենտներով: 2022-2023 թվականների թատերաշրջանում Լիդարիս Ավետիսյանն արտերկրում հանդես է եկել Sempere Dresden-ում, Մարիինյան թատրոնում (Ալֆրեդո, «Տրավիատա»), Բոլշոյում (Կոնս Ալմալիվա, «Սեւիյան սափրիչ»):

Առաջիկայում հանդես կգա Գլյանդբորնի փառատոնում (Նեմորինո, «Սիրո ըմպելիք») եւ Թագավորական օպերային թատրոնում, Քովենթ Գարդեն (Ալֆրեդո, «Տրավիատա»): Ապրիլի 11-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում կկայանա Լիդարիս Ավետիսյանի մենահամերգը:

ԼՈՒՐԵՐ

ՄԵԿՆԵԼ ԵՆ ԳԵՐՄԱՆԻԱ

Հայաստանի ծանրամարտի երիտասարդական հավաքականը մեկնում է Ալբանիա, որտեղ կմասնակցի աշխարհի առաջնությանը: Ալբանիայի Դուրես քաղաքում կայանալիք աշխարհի առաջնությանը Հայաստանից կմասնակցեն Ժորա Գրիգորյանը (61 կգ), Սերյոժա Բարսեղյանը (67 կգ), Նարեկ Մկրտչյանը (73 կգ), Յովհաննես Ղահրամանյանը (81 կգ), Վալերիկ Մովսիսյանը (89 կգ), Աշոտ Մարգարյանը (96 կգ), Ռուստամ Սահրաբյանը (102 կգ), Գագիկ Մկրտչյանը (+102 կգ), ինչպես նաեւ Ալինա Սուքիասյանը (71 կգ), Աննա Ամրոյանը (76 կգ) եւ Հմայ Պողոսյանը (81 կգ): Առաջնությունը կմեկնարկի մարտի 25-ին եւ կեզրափակվի ապրիլի 1-ին:

2 ՌԵԿՈՐԴ

Պորտուգալիայի հավաքականի եւ Սաուդյան Արաբիայի «Ալ Նասրի» 38-ամյա հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուն Եվրոպայի առաջնության ընտրական խաղում (4:0) Լիխտենշտեյնի թիմի դեմ խաղադաշտ դուրս գալու եւ 2 գոլ խփելու շնորհիվ երկու ռեկորդ է սահմանել: Նա 197-րդ հանդիպումն անցկացրեց Պորտուգալիայի հավաքականում եւ գերազանցեց Քովլեյթի հավաքականի 38-ամյա խաղացող Բադր Ալ Մուտալի (196 խաղ) եւ Մալայզիայի հավաքականի Նախկին խաղացող Սո Չին Էնի (195 խաղ) ռեկորդները ազգային թիմում անցկացրած հանդիպումների քանակով: Ռոնալդուն դարձավ նաեւ առաջին ֆուտբոլիստը, որը հավաքականի պաշտոնական հանդիպումներում խփած գոլերի քանակը հասցրեց 100-ի:

ՈՒՆԵՆ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ երգչուհի Իջինի եւ ամերիկացի երգչուհի Նիկոլ Շերգինզերի ճանապարհներն առաջին հայացքից շատ տարբեր են, բայց այս երկու գեղեցկուհիներն արտաքին շատ ընդհանրություններ ունեն: Մոսկվաբնակ հայուհին եւ ամերիկյան աստղը անհերքելի հմայիչ են եւ ունեն ոճային որոշակի նմանություններ: Երկուսն էլ սեփական թխամաշկ, գրավիչ, եթե ավելի խորը գնենք, նման են նաեւ ծայրային տեմբերով ու երգելաոճով: Իրենց մաշկի գեղեցիկ թուփ երանգն ու մազերի սեւությունն ավելի ընդգծելու համար երգչուհիները հաճախ նախընտրում են սպիտակ գույնը: Թե՛ Իջինին, թե՛ Նիկոլին պարբերաբար կարելի է տեսնել շքեղ երեկոյան կերպարներով՝ վառ դիմափարդարում, փայլուն զգեստներ ու սեքսուալ կեցվածք: 33-ամյա Իջինն ու 44-ամյա Նիկոլը փայլում են նաեւ շքեղ կառուցվածքով եւ մեծ տեղ են հատկացնում սպորտին: Իրենց գեղեցիկ մարմինները արտիստները հաճախ ընդգծում են կիպ կամ որոշակի բացվածք ունեցող հագուստով: Երգչուհիների դիմափարդարման մեջ եւս կտեսնեք ընդհանրություններ՝ առօրյայում մինիմալ շպար, իսկ բեմում՝ դասականից մինչեւ ամենադրամատիկ կերպարներ: Մնում է հուսալ, որ հայ երգչուհին էլ մի օր կունենա այն համաշխարհային ճանաչումը, որը վայելում է Նիկոլ Շերգինզերը, մասնավոր՝ ինչպես տեսնում եք, հայուհին համաշխարհային աստղին ոչնչով չի զիջում:

ԳԱՍ

ՄԵՐ ԿԱՐԾԻՔԸ ՉԵՆ ՀԱՐՑՐԵԼ

Երեկվանից ողջ համացանցը ողողված է լուսանկարներով՝ ինչո՞ւն են Երեւանի կենտրոնական սարքեր հասվածներում հասարակում ծառեր հասվում:



Քաղաքացիները սոցիալական ցանցերում ծառերի հատման գործընթացից լուսանկարներ էին հրապարակել՝ այսպիսով բողոքելով քաղաքապետարանի իրականացրած անպատասխանատու աշխատելաոճից:

ArmLur.am-ը քաղաքացիների վրդովմունքի հետքերով կապ հաստատեց Գիտությունների ազգային ակադեմիայի հետ՝ պարզելու համար, թե արդյոք Երեւանի քաղաքապետարանը համագործակցել է ՀՀ ԳԱԱ-ի Բուսաբանության բաժնի ակադեմիկոսների հետ:

Մեր հարցմանն ի պատասխան՝ Գիտությունների ազգային ակադեմիայից պատասխանեցին. «Որեւէ գրավոր թուղթ քաղաքապետարանից չենք ստացել, որեւէ մեկը մեր աշխատակիցների կարծիքը չի հարցրել, ու, բնականաբար, մենք որեւէ գրավոր եզրակացությամբ կամ հե-

տազոտությամբ հանդես չենք եկել: Բուսաբանության բաժնի աշխատակիցներից որեւէ մեկը կարծիք չի հայտնել՝ կարելի է ծառերը հատել, թե ոչ, այսինքն՝

քաղաքապետարանից պաշտոնական գրություն կամ քննարկման հրավեր չի եղել»:

ԼԻՂՆ ԵՐԻՍՏՈՐՅԱՆ

● Մարտի 26-ին Արամ Խաչատրյանի համերգասրահում տեղի կունենա «Զարթոնք» պոեզիայի երեկոն: Տոմսերի արժեքը՝ 3000-8000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:



Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

**ԿԱՐԳ**

**ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ կուսակցության առաջին համագումարները երբ եւ ինչոյն պատճառով է գումարել: Հետաքրքիր է՝ ինչ չափանիւթներ, դասակարգումն ու արգելքներ կան:**  
**Կարապետ Սուրադյան (36 տարեկան)**



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Հայտնում ենք, որ կուսակցության հիմնադիր համագումարը որոշումներ է ընդունում կուսակցության ստեղծման, կուսակցության ծրագրի ընդունման եւ կանոնադրության հաստատման, պետական գրանցման համար լիազորված անձի (անձանց), ղեկավար եւ վերահսկողություն իրականացնող մարմինների կազմավորման մասին, ինչպէս նաեւ իր կազմից ընտրում է մշտապէս գործող ղեկավար մարմնի ղեկավար (կամ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար): Կուսակցության ստեղծման մասին որոշումն ընդունվում է կուսակցության հիմնադիր համագումարին ներկա առնվազն 100 հիմնադիր միաձայն որոշմամբ: Կուսակցության ծրագրի եւ կանոնադրության հաստատման, պետական գրանցման համար լիազորված անձի (անձանց), ղեկավար եւ վերահսկողություն իրականացնող մարմինների ձեւավորման մասին որոշումներն ընդունվում են կուսակցության հիմնադիր համագումարին ներկա հիմնադիրների ձայների մեծամասնությամբ: Հիմնադիր համագումարի կազմակերպիչները հիմնադիր համագումարի անցկացման օրվանից առնվազն մեկ ամիս առաջ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ <http://www.azdarar.am>, հրապարակում են կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման ժամանակի եւ վայրի մասին ծանուցում, ինչպէս նաեւ կուսակցության կանոնադրության եւ ծրագրի նախագծերի հիմնական դրույթները:

**«Կուսակցությունների մասին» ՀՀ օրենք**

**«ԺՈՂՈՎՈՒՐԳ».** Նշենք, որ կուսակցության՝ որպէս իրավաբանական անձի իրավունակությունը ծագում է պետական գրանցման պահից, այսինքն՝ որպէս սուբյեկտ՝ կուսակցությունը սկսում է իր գործունեությունը, ձեռք բերում իրավունքներ գրանցման պահից:

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ**

**ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ երբ է մերժվում կենսաբուժական նշանակելը:**  
**Հայկունի Պետրոսյան (60 տարեկան)**



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ կենսաթոշակ նշանակելու մերժելու մասին որոշում կայացվում է, եթե՝

- անձը չունի կենսաթոշակի իրավունք,
- կենսաթոշակի իրավունք ունեցող անձը, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, հաշվառված չէ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով,
- ներկայացված փաստաթղթերը եւ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները բավարար չեն անձին կենսաթոշակ նշանակելու համար:

**ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն**

**«ԺՈՂՈՎՈՒՐԳ».** Նշենք, որ ենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակ նշանակելու մերժելու կամ անձին կենսաթոշակ նշանակելու եւ լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին որոշում կայացնելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ կարգով ծանուցում է կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին՝ նշելով մերժելու պատճառները եւ որոշումը բողոքարկելու կարգը:

**ԼՈՒՐ ԿԱՐԴ**

Լուսանկարն արվել է Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում



Երեւանյան բեմում առաջին անգամ ներկայացվեց ֆրանսիացի դրամատուրգ Պիեռ Կոռնեյլի «Սիդ»-ը՝ հայ դերասանների մասնակցությամբ:

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Մեր թերթը  
 Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայմամուլ» ՓԲԸ**  
 հեռ. 45-82-00, 45-19-11

**«Հայփոստ» ՊՓԲԸ**  
 հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**  
 հեռ. 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

**ԱՌԱՋԱՐԿ**  
**հայկական տպագիր մամուլից**

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ \_\_\_\_\_  
 Ազգանուն՝ \_\_\_\_\_  
 Առաքման հասցե՝ \_\_\_\_\_  
 Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ \_\_\_\_\_

Հեռ.՝ (060) 490049  
 0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.



**«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը.**  
**«Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:**

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ  
 Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ.՝ 010 54-64-23  
 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086  
 տրված է 24.11.2010  
 Ստորագրված է տպագրության 24.03.2023  
Պատկերը հարցազրույցից է: Կարգից: Կ. Պատկերը հարցազրույցից է: Կարգից: Կ. Պատկերը հարցազրույցից է: Կարգից: Կ.

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: